ք.Երևան

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆԻՆ

ՀՀ քաղաքացի Արամ Պողոսի Վարդևանյանից
Հաշվառման հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովա փ., շ. 6, բն. 11
Ծանուցման հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Վ.Սարգսյան 26/1

ԻՐԱԶԵԿՈՒՄ
Հանրային հավաքի անցմացման մասին

Հարգելի՛ պարոն Քաղաքապետ,

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 9-14-րդ հոդվածների պահանջներով, իրազեկում եմ, որ անցկացնելու եմ **հանրային հավաք՝ հանդես գալով որպես կազմակերպիչ:**

Ստորև ներկայացնում եմ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով իրազեկմանը ներկայացվող պահանջների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

1. Հավաքի վայրը՝ Երևան, Ազատության հրապարակ:
2. Հավաքի սկզբի և ավարտի ժամանակը՝ 2021թ. հունիսի 20, 21, 22, 23, ժամը 00:0023:00
3. Հավաքի նպատակը՝ Հայ ժողովրդին ապագայի նկատմամբ լավատեսության տրամադրվածության և միասնականության ամրագրումը, ծրագրային հարցերի քննարկում:
4. Մասնակիցների սպասվող թիվը՝ շուրջ 25000 անձ:
5. Հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցները՝ Հավաքների ազատության սահմանադրական իրավունքի իրացման ամենաարդյունավետ և նույնիսկ հենց Սահմանադրությամբ հիշատակված բացօթյա տարածքում տվյալ դեպքում իրազեկման ենթակա հավաքը իրացվելու է նաև անհրաժեշտ սարքավորումների ապահովմամբ՝ օրվա խորհրդին համապատասխան և դրանով հավաքի կազմակերպվածության երաշխավորմամբ: Մասնավորապես Ազատության հրապարակում տեղադրվելու են. բեմահարթակ 12մետր լայնությամբ 10մետր խորությամբ 1,7 մետր բարձրությամբ, ալյումինե կոնստրուկցիաներ 14 մետր լայնքով 12 մետր խորությամբ 8,5 մետր բարձրությամբ, կողային հատվածներում ալյումինե կոնստրուկցիաներ յուրաքանչյուր կողմում 10մ երկարությամբ, ԱԷԴ էկրանների համար 250 քմ, Շարժական լուսային սարքավորումներ թվով 100 հատ, ձայնային համակարգ 100 կիլովատ հզորությամբ, իսկ ընդհանուր հոսանքի հզորությունը շուրջ 200 կիլովատ:

Հավաքի համար անհրաժեշտ **են լինելու թվով 40 հատ արգելափակոցներ որոնք պատշաճ կերպով կպահպանվեն և կվերադարձվեն:**

Միաժամանակ նման ծավալի աշխատանքների կատարման համար խնդրվում է ապահովել նաև **2021 թվականի <u>հունիսի 19-ից հնարավորություն սարքավորումների և կազմակերպչական այլ աշխատանքների կատարման համար</u>, որոնց իրացման ընթացքում ընդհանուր առմամբ զգալի աստիճանի հասնող որևէ բնականոն գործունեության խաթարումը կբացառվի,** իսկ աշխատանքները կկատարվեն 10:30-

ից մինչև 18:00-ն, իսկ ըստ **լիազոր մարմնի կամ իրավասու մարմնի պահանջի աշխատանքի ժամկետները կարող են տեղափոխվել երեկոյան ժամերին:**

6. Կարգադրիչների նախատեսվող թիվը՝ 5 մարդ:

7. Հավաքին նախատեսվում է երթ՝ Ազատության հրապարակ Մաշտոցի պողոտա-Կորյունի փողոց-Նալբանդյան փողոց-Հանրապետության հրապարակ Ամիրյան փողոց-Մաշտոցի պողոտա-Ազատության հրապարակ երթուղով :

8. Հավաքի կազմակերպեի տվյալները՝ Ազգանուն, անուն, հայրանուն՝ Վարդևանյան Արամ Պողոսի, Անձնագիր՝ AN 0578625, տրվ. 22.07.2013թ.-ին, 001-ի կողմից, Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Սայաթ Նովա փ, շ 6, բն 11, Հեռախոս՝ 091 888892, Փոստային հասցե՝ 0025, էլեկտրոնային հասցե՝ aramovar@gmail.com.

9. Հավաքի ղեկավարի տվյալները՝ Ազգանուն, անուն, հայրանուն՝ Սահակյան Աիեր Սամվելի, Նույնականացման քարտ՝ 000390799, տրվ. 24.12.2013թ.-ին, 069-ի կողմից: Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հ.Հովհաննիսյան 38 տուն, Հեռախոս՝ 099 044444, Փոստային հասցե՝ 0086:

«Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Հավաքի իրազեկման մեջ նշված ժամանակում և վայրում այլ, ներառյալ՝ հակադարձ ուղղվածությամբ հավաքի անցկացումն ինքնին հիմք չէ հավաքի նկատմամբ սահմանափակումներ սահմանելու համար, եթե չկա դրանց մասնակիցների բախման անմիջական վտանգ: Տվյալ դեպքում ըստ ունեցած նախնական տվյալների այդ օրը նախատեսված է նաև այլ անձի կողմից հանրային հավաք այդ վայրում, որը հիմք ընդունելով վերը նշված դրույթը չի կարող հիմք հանդիսանալ իմ կողմից նախաձեռնված հավաքի նկատմամբ սահմանափակումներ կիրառելու համար, քանի որ նույնիսկ տեսականաորեն առկա չեն որևէ օրենսդրական սահմանափակման հիմքեր:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներով՝

Խնդրում եմ

Սույն իրազեկումը ընդունել ի գիտություն:

Կից ներկայացվում է անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

ՀԱՎԱՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ԱՐԱՄ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ

03.06.2021թ.